գաւառապետի պաշտօնակատար Չխսերմանի նախագահութեամբ։

Կործանուած գիւղերի թիւը վեց է, բայց վնասուած են մօտ 15։ Մարդկային զոհերի թիւը, որ մնացել են փլատակների տակ, 400-ից աւելի է, իսկ անասունների թիւը մօտ 1000։ Քրիստոնեայ ընթերցողներ, մտածեցէք մի րոպէ այն թշուառ գիւղացիների մասին, որ կորցրել են իրենց սիրելիներին, տունն ու տեղը, ամբողջ հարըստութիւնը և այսօր այս ձմրան խիստ եղանակին միայն իրենց եղբայրակիցների օգնութեանն են ապաւինում։ Մենք յոյս ունինք, թէ մեր Հոգևոր պետի կոչը արձագանգ կգտնէ Հայ հասարակութիւնների սրտում և առատ նուէրներ կհասցնեն արկածեալներին։ Քրիստոնեան պարտաւոր է ձեռք մեկնել ամեն մի թշուառի, բայց և առաւել ազգակից կարօտեալներին։ Կործանուած և վնասուած բոլոր գիւղերի բնակիչները Հայեր են։

ՏԱՃԿԱՀԱՅՔ

— Տիվրիկի խառն ժողովը տեղւոյն Զարգարեան Տ. Գրիգոր քահանան առաջն. տեղապահ ընտրել ուզած էր։ Կրօնական ժողովն յարմար գտնեց այդ ընտրութիւնն և որոշեց ըստ այնմ տեղեկութիւն հաղորդել Կիլիկիոյ կաթող. տեղապահին։

— Կրօն. ժողովը կարդալով Վանայ այցելու հայր Տ. Ներսէս եպս.-ի մէկ տեղեկագիրը, որով Լիմ և Կտուց անապատներու վիճակին վրայ տեղեկութիւններ կը հաղորդէր, որոշեց յանձնարարել Տ. Ներսէս եպս.-ին որ, յիշեալ երկու անապատներու տարեկան ելևմուտքը նըշանակէ մի առ մի և որոշ տեղեկագիր մը փութացնէ ի պատրիարքարան։

— Մշոյ առաջն. տեղապահ Տ. Բարգէն ծ. վրդ. ընդարձակ տեղեկագիր մը ևս ղրկած է ի պատրիարքարան, տեղւոյն տնտեսական վիճակին վրայ մանրամասն տեղեկութիւններ հաղորդելով և կարօտելոց բաշխուելու համար կարևոր նպաստ մը խնդրած է։

— Մանչէսթրէն 81 անգլ. ոսկի ղրկուած է ի պատրիարքարան որբոց բաժնուելու համար։

— Շահնազարեան կտակէն մնացած 8—900 ոսկին գումարը պիտի յատկացուի Սսոյ վանքի վարժարանին։

— Իզմիրի մէջ կազմուած է «Եկեղեցասէր» անուամբ ընկերութիւն մը՝ որու նպատակն է շնորհքով քահանաներ պատրաստել քաղաքին և թեմօրէից համար։

— Նպաստից Յանձնաժողովը որոշեց առ այժմ 100 ոսկի ղրկել Ուրֆայի կարօտեալներուն. նոյնպէս 50 ոսկի Ակն, 25 ոսկի Կիւրին և 20 ոսկի Ալպիսթան։

— Բարիզի նորընտիր հոգևոր հովիւ Տ. Վռամշապուհ քհ. Քիպարեան մտադիր է Սէն գետի եզերքը կառավարութեան կողմէ նուիրուած գետնին վրայ եկեղեցի մը կառուցանել տալ, որուն համար արդէն 3000 ոսկիի չափ գումար մը հանգանակուած է կըսուի։ Սակայն յիշեալ եկեղեցւոյն ամբողջ շինութեան գործը 8000 ոսկւոյ գումարի մը յանգիլը որոշուած է։ Դէթ այսպէս կը հաւատեն իրազեկ անձեր։

— Կրօն. ժողովը կարդալով Վառնայի ազգայիններու կողմէ ներկայացուած հանրագրութիւնը՝ որով կը խնդրուէր Հիւրմիւզեան Տ. Գէորգ քահանային ներել և արտօնել զինքը որպէսզի քահանայագործէ, առ այժմ յետաձգեց սոյն ներման խնդրանքը. սակայն և այնպէս յանձնարարեց Վառնայի եկեղեցւոյ Տ. Մարտիրոս Աւագ քահանային, որ տեղական միջոցներով հոգածութիւն ընէ նոյն քահանային ընտանեացը։

— Դուրեան Տ. Թաթուլ վրդ.-ի հրաժարման պատճառաւ Զմշկածագի Առաջնորդութիւնը թափուր մնացած ըլլալով՝ Ս. Պատրիարք հօր յանձնարարական մասնաւոր նամակով Զմշկածագ մեկնած է Տ. Սուքիաս քհնյ. Մանուկեան։

— Երուսաղէմի Պատրիարք, Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան, որ ժամանակէ մը ի վեր Յոպպէ կը գտնուէր օդափոխութեան համար, Դեկտ. 16-ին Երուսաղէմ վերադարձեր է յատուկ և զարդարուն կառախումբով մը՝ զոր երկաթուղւոյ վարչութիւնը դրած էր Ն. Սրբազնութեան տրամադրութեան տակ։

— Պր. Ջանշեանց Ս. Պատրիարք հօր տրամադրութեան տակ դրած էր նոր գումար մը ութերորդ որբանոցի մը բացման համար։ Որովհետև Մշոյ առաջնորդական տեղապահ Բարգէն վրդ. անհրաժեշտ նկատած էր Մշոյ մէջ աղջկանց յատուկ որբանոց մը բանալ, որոշուեցաւ Ռուսահայոց բարերարին ղրկած նպաստն այդ նպատակին յատկացնել։

— Կրօն. ժողովն իր վերջին նստին ի նկատ առաւ Ս. Հայրապետէն եկած վերջին պաշտօնագիրն, որ Տ. Բարգէն ծ. վրդ.-ի յարուցած

խնդիրը Մշոյ Լքեալ կանանց մասին՝ միանգամ ընդ միշտ կը լուծէր։

— Ամերիկայէ 100 ոսկի զրկուած է նպաստ ից յանձնաժողովին։

— Բալուի մէջ գաւառական ընդհ. ժողով գումարուելով քուէարկութիւն կատարուած և Այներու մեծամասնութեամբ Առաջնորդ ընտրուած է Մուշի Նախկին վանահայր Տ. Վարդան ծ. վ. Յակոբեան։

— Սիսէն Տ. Եղնիկ քհ. Թուր-Սարգիսեան ծանուցած է Կրօն. ժողովին, թէ ճէպէլի Պէրէքէթի կողմերու ազգայինք անհովիւ մնացած ըլլալով՝ ապիտաբար կը դիմեն դաւանափոխութեան. եկեղեցիներէն շատերը պէտք եղած կրօնական մատեաններէն զուրկ են։ Տ. Եղնիկ քհ. կը խնդրէ որ գոնէ Շարականներ, Ժամագրքեր և եկեղեցական զգեստներ ուղարկուին։ Ժողովը որոշեց արժանն անօրինել երբ Ս. Էջմիածնէն սպասուած եկեղեցական գրքերը հասնին։

— Կիլիկիոյ Կաթող. տեղապահ Տ. Բէքմէզեան Սրբազան՝ Տ. Խորէն վ. Դիմաքսեանը Մերսինի քարոզիչ կարգած է տեղւոյն ազգայիններու խնդրանքին համաձայն։

— Սսոյ ժառանգաւորաց վարժարանին նիւթական անձկութիւնը նոր մտահոգութիւններ կը պատճառէ անոր յարատևութեան համար։ Տեղապահ Սրբազանը Սիսէն նոր նուիրակ վարդապետ մը ղրկած է՝ կարևոր հանգանակութեան մը ձեռնարկելու համար։ Քանի մը քահանաներէ և աշխարհականներէ յանձնաժողով մը պիտի կազմուի նպաստ հաւաքելու համար այս բարենպատակ հաստատութեան։

— Հարսանեկան տգեղ սովորութիւններն ու զեղծումները վերցնելու համար՝ Ատանայի Կրօն. ժողովն 7 յօդուածէ բաղկացեալ ծանուցագիր մը պատրաստած էր։ Դեկ. 6 կիր. օրը եկեղեցու մէջ կարդացուեր է մեծ դոհութիւն պատճառելով ժողովրդին։

ԱՒՍՏՐԻՈՅ ՀԱՅՔ

Սուչաւայից. Այս քաղաքը Աւստրիայի Հայոց կեդրոններից մէկն է։ «Արարատ»-ի ընթերցողներն անշուշտ յիշում են անցեալ տարուայ «Արարատ»-ի № 1 և 2 հրատարակուած յօդուածը։ Սուչաւան մեր հեռաւոր այն գաղութներից մէկն է, որ ամեն դժուարութեանց յաղթելով հաւատարիմ է մնացել իւր մայրենի Հայաստանեայց Եկեղեցուն։ Վերջին ժամանակ զրկուած էր քահանայից. գաղութի ընտրութեամբ Մայր Աթոռն էր ուղարկուած պ. Կարապետ Կայնայեան, որ $1\frac{1}{2}$ տարի այստեղ մնալով՝ վարժուեցաւ եկեղեցական պաշտամանց մէջ և ապա անցեալ հոկտ. ձեռնադրուելով՝ հայրենիք դնաց։ Այժմ մի քաղաքացու, Տ. Շ. Մ. Թորգոմեանցի կողմից թղթակցութիւն ենք ստացել, որ ժողովրդի ուրախութիւնն է նկարագրում նորընծայի նոյեմբ. 9-ին Սուչաւա ժամանելու առթիւ։ Ուրախ է հայ գաղութը և որդիական ակնածութեամբ իւր շնորհակալութիւնն է յայտնում Ն. Վեհափառութեան նորընծայի ձեռնադրութեան համար։ Տ. Կարապետ քահանան իւր հոգևոր կոչման պարտքը կատարելուց զատ՝ քաղաքի վարժարանի հայ աշակերտներին կրօն է ուսուցանում, որոնք երկար ժամանակ զրկուած էին մայրենի եկեղեցու վարդապետութեամբ դաստիարակուելուց։ Սուչաւայի հայերն ունին և ազգային դպրոց, ուր հայ մանուկները տարրական ուսման հետ, ուսանում են մայրենի լեզուն, եկեղեցական երգեցողութիւն, փոխատացութիւն ևն։ Յարգելի թղթակցի ասելով՝ մայրենի լեզուն մարելու վիճակի մէջ էր, բայց այժմ յոյս ունին, որ կարճ ժամանակի մէջ կվերակենդանանայ դարձեալ շնորհիւ յիշեալ քահանայի։ Թղթակիցը հրճուանօք է յիշում, թէ ինչպէս հայ մանուկներից ազգային երգեր են լսում այժմ։

— Յօդուածագիրը մեծ գովասանքով է խօսում նաև Տ. Արսէն վարդապետ Վեհունու գործունէութեան մասին, որ իւր քարոզներով կարողացել է ժողովրդի մէջ ոգևորութիւն յառաջ բերել, բարեկարգել դպրոցը, ուր գլխաւորապէս հայ աղջիկներն են ուսանում։ Նա վերակազմել է հանգած «Անի» ընկերութիւնը, որի վարչութեան գլուխն են անցած տեարք Կարապետ, Գրիգոր Կայինայ, Օգիւստ Թորոսովիչ իրենց նորընծայ քահանայի նախագահութեամբ։ Սուչաւայի մեր հայ քոյրերն էլ անմասն չեն մնացել այս ընդհանուր շարժման մէջ. մի խումբ պատուելի տիկնայք հանգանակութիւն են արել՝ նոր